ՇԱՀԱԳՐԳՌՎԱԾՈՒԹՅԱՆ ԱՌԿԱՅՈՒԹՅԱՄԲ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆԸ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

Գևորգ Պողոսյան
ԵՊՀ քաղաքացիական իրավունքի ամբիոնի ասպիրանտ

Իրավաբանական անձի կառավարման մարմինների պատասխանատվության հարցին անդրադառնում է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 57-րդ հոդվածի 3-րդ մասը, որի համաձայն՝ անձը, որն օրենքի կամ իրավաբանական անձի կանոնադրության ուժով հանդես է գալիս նրա անունից, պետք է գործի բարեխղճորեն և ողջամիտ՝ ի շահ իր կողմից ներկայացվող իրավաբանական անձի: Նա պարտավոր է իրավաբանական անձի հիմնադիրների (մասնակիցների) պահանջով հատուցել իր կողմից իրավաբանական անձին պատճառած վնասները, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով: Նույնաբովանդակ իրավանորմ է նախատեսված նաև «Հասարակական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 2-րդ մասով, իսկ 23-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ գործադիր մարմինը, իսկ օրենքով նախատեսված դեպքերում՝ մարմնի ղեկավարը կրում են օրենքով նախատեսված պատասխանատվություն օրենքների, իրավական այլ ակտերի, կազմակերպության կանոնադրության, ժողովի որոշումների կամ կնքված պայմանագրերի պահանջները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար: Ինչպես տեսնում ենք՝ ՀՀ օրենսդրությամբ ոչ առևտրային իրավաբանական անձի կառավարման մարմիններից միայն գործադիր մարմնի (կազմակերպության անունից հանդես գալու իրավունք ունեցող մարմնի) պատասխանատվությունն է կարգավորվում, այն էլ՝ ընդհանուր բնույթի իրավանորմերով: Մինչդեռ բացարձակապես կարգավորված չեն այն դեպքերը, երբ կազմակերպությանը վնաս է հասցվել կառավարման մարմնի անդամ(ներ)ի կողմից իրենց լիազորությունները չարաշահելու, շահագրգռվածության առկայությամբ գործարքներ կնքելու կամ կառավարման մարմինների անդամներին չափազանց բարձր և ոչ ողջամիտ վարձատրություն սահմանելու և այլ միջոցներով: Այս առումով հատկանշական է, որ «ՀՀ քաղաքացիական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին ՀՀ օրենքի» նախագծում[1] առաջարկվում է նախատեսել նաև իրավաբանական անձի կառավարման մարմինների անդամների և իրավաբանական անձանց գործողությունները կանխորոշող անձանց քաղաքացիաիրավական պատասխանատվությունը:

Անդրադառնալով արտասահմանյան փորձին՝ անհրաժեշտ է արձանագրել, որ անգլոսաքսոնական իրավական համակարգի պետություններում կորպորացիաների կառավարման մարմինների անդամների իրավական պատասխանատվությունը ընդհանրապես վրա է հասնում ֆիդուցիար պարտականությունների խախտման դեպքում: Քննարկվող պարտականություններից հիմնականները ոչ առևտրային կորպորացիաների համար հավատարիմ լինելու (duty of loyalty) և պատշաճ հոգա-

[1] Տե՛ս http://moj.am/storage/files/legal_acts/legal_acts_3463498407311_qax_or_popox-1.pdf (վերջին մուտք՝ 10.02.18)

ծություն կամ հոգատարություն դրսևորելու (duty of care) պարտականություններն են, որոնք վերաբերում են ոչ առևտրային կազմակերպության տնօրենների պարտականությունների կատարման ժամանակ նրանց վարքագծի ստանդարտներին: Ներկայումս հավատարիմ լինելու և պատշաճ հոգածություն դրսևորելու ֆիդուցիար պարտականությունների խախտումը տվյալ կազմակերպության կառավարման մարմիններում ընդգրկված անձանց համար հանգեցնում է քաղաքացիաիրավական պատասխանատվության[1]:

ԱՄՆ իրավական դոկտրինում հավատարիմ լինելու պարտականությունը ենթադրում է, որ ոչ առևտրային կազմակերպության անդամները, մասնակիցները, հիմնադիրները և այլ պաշտոնատար անձինք պետք է խուսափեն այնպիսի գործարքներից, որտեղ առկա է կամ հնարավոր է առաջանա շահագրգռվածություն կամ շահերի բախում, քանի որ այս դեպքերում ի հայտ է գալիս հակասություն վերոգրյալ անձանց ֆիդուցիար պարտականությունների և անձնական շահերի միջև[2]: Ընդ որում այս պարտականության հիմնական իմաստը այն է, որ ոչ առևտրային կազմակերպության կառավարման մարմիններում ընդգրկված անձինք պարտավոր են կազմակերպության կառավարումն իրականացնել շահառուների շահերից ելնելով[3]: Հավատարիմ լինելու ֆիդուցիար պարտականությունը ոչ առևտրային կազմակերպության կառավարման մարմիններում ընդգրկված անձանցից պահանջում է, որ վերջիններս կազմակերպության շահերն իրենց անձնական շահերից վեր դասեն, գործեն այնպես, որ կազմակերպությանը չպատճառեն վնաս և խուսափեն այնպիսի գործելաոճից, որի արդյունքում նրանք կարող են իրենց կարգավիճակը անպատշաճ կերպով օգտագործելով ստանալ օգուտներ կամ այլ առավելություններ:

Վերոնշյալ ֆիդուցիար պարտականությունների միջոցով են կարգավորվում նաև շահագրգռվածության առկայությամբ (շահերի բախում) կնքվող գործարքները և դրանց միջոցով չարաշուհումներ թույլ չտալուն ուղղված կառուցակարգերը: Շահերի բախման՝ որպես իրավական երևույթի իրավակարգավորումները ի հայտ են եկել անգլո-ամերիկյան իրավական համակարգի երկրներում, իսկ իրավաբանական գրականությունում այդ հարցի կապակցությամբ միասնական դիրքորոշման հասնելուն ուղղված ջանքերը եղել են ապարդյուն[4]: Շահերի բախման անգլիական դոկտրինը հիմնվում է նրա հետևյալ գաղափարի վրա. «Ոչ ոք, ում վրա դրված է հանուն կազմակերպության գործելու պարտականություն, չպետք է իր համար ստեղծի այնպիսի իրավիճակ, որի պայմաններում իր անձնական շահերը կարող են

---

[1] Տե՛ս **Hopt, K.J. and Hippel,** T. von The board of nonprofit organizations: some corporate governance thoughts from Europe, Comparative corporate governance of non-profit organizations, Cambridge University Press, Cambridge [U.K.] New York, N.Y 2010 էջ 151:

[2] Տե՛ս **Edward C. Halbach, Jr.,** University of California, Berkley School of Law, Restatement of the Law Trird. Trusts: VOLUME 3 (§§ 70 to 92), The American Law Institute 2007, § 78(2) (474), United States of America, National conference of Commissioners on Uniform State Laws, Uniform Trust Code (Last Revised or Amended in 2010), § 802(b), էջ 131 (195), էլեկտրոնային ռեսուրս՝ http://www.uniformlaws.org/shared/docs/trust_code/utc_final_rev2010.pdf (վերջին մուտք 17.02.18)

[3] Տե՛ս **Klaus J.Hopt (Editor),** Նշված աշխատությունը, էջ 150:

[4] Տե՛ս **David Hayton and Charles Mitchell** Hayton & Marshall Commentary and Cases in the Law of Trusts and Equitable Remedies, Thomson, Sweet and Maxwell (15th edn. 2005) էջեր 551–569:

հակադրության մեջ գտնվել իր կողմից կատարման ենթակա պարտականությունների հետ»[1]:

Հավատարիմ լինելու (duty of loyalty) ֆիդուցիար պարտականության համաձայն՝ շահագրգռվածության առկայությամբ գործարքները (շահերի բախում) թույլատրվում են, եթե առկա է այդպիսի շահագրգռվածության և էական նշանակություն ունեցող փաստերի բացահայտում, և եթե այդպիսի գործարքը հավանության է արժանացել խորհրդի շահագրգռվածություն չունեցող անդամների կողմից, ովքեր գործարքի կնքման վերաբերյալ որոշում կայացնելիս բարեխղճորեն ելնում են այն համոզմունքից, որ այդպիսի պայմանագրի կնքումը տվյալ կազմակերպության համար արդարացի է[2]: Որպես շահագրգռվածության առկայությամբ գործարքների վառ օրինակ կարող են համարվել կազմակերպության գույքի կամ այլ ակտիվների օգտագործումը ավելի շահավետ եղանակով, քան դա հնարավոր կլիներ երրորդ անձանց կամ աութսայդերների համար[3], ոչ առևտրային կազմակերպությանն իրեն պատկանող հնարավորության իրականացումից զրկելը[4], ոչ հրապարակային, կազմակերպչական, էական նշանակություն ունեցող տեղեկության կամ կարգավիճակի օգտագործումը, ինսայդերների առավելությունների կամ կորպորատիվ անհիմն ծախսերի իրականացումը[5], կազմակերպության հետ մրցակցելը[6]:

Հատկանշական է, որ շահագրգռվածության առկայությամբ գործարքների կիրառության հնարավոր տարածման վտանգը կանխելու նպատակով առաջ են քաշվել որոշակի լուծումներ: Ընդ որում լուծումները երկու ասպեկտ ունեն. **առաջինը վերաբերում է գործարքի կնքման ընթացակարգային պահանջներին**, իսկ **երկրորդը՝ նյութաիրավական բնույթին**: Առաջին ասպեկտի ներքո պետք է քննարկել այն հարցը, թե ինչպես է որոշակի շահագրգռվածության առկայությամբ գործարքը կայացվել տնօրենների կամ հոգաբարձուների խորհրդի կողմից, այսինքն՝ արդյոք նախատեսված են նմանատիպ գործարքների կնքման համար որոշակի ընթացակարգեր, կամ պահպանվել են այդպիսիք գործարքների կնքման ժամանակ, արդյոք գործարքի կնքման մասին որոշման կայացման պահին խորհուրդը եղել է անկողմնակալ և օբյեկտիվ, արդյոք տվյալ գործարքի վերաբերյալ ամբողջ տեղեկատվությունը շահագրգռվածություն ունեցող տնօրենի կողմից բացահայտվել է դրա մասին որոշում կայացնողներին, արդյոք շահագրգռվածություն ունեցող տնօրենը բացահայտել է իր շահագրգռվածության բնույթը և աստիճանը[7]:

---

[1] Movitex Ltd v. Bulfield [1988] BCLC 104 at 117. A guide to Conflicts of Interest for Charity Trustees (Version 03/04). The American Law Institute Principles of the Law of Nonprofit Organizations Discussion Tentative Draft No. 1 Subject Covered Draft Part II Charities Chapter 3 Governance (19 March 2007) para. 330, pp. 224–280 (Reporter Professor Evelyn Brody, Chicago-Kent College of Law).

[2] Տե՛ս Rev. Model Nonprofit Corp. Act §§ 8.31, 8.32, 8.33; Cal. Corp. Code §§ 5227, 5233–5237, 7233, 7236; NY Not-for-Profit Corp. L. §§ 715–716, Klaus J.Hopt(Editor), Thommas von Hippel (Editor), Նշված աշխատությունը, էջ 152

[3] Տե՛ս Harding Hosp. v. US 505 F.2d 1068 (6th Cir. 1974) (preferential lease for office space).

[4] Տե՛ս Northeast Harbor Gulf Club, Inc. v. Harris, 661 A.2d 1146 (Me. 1995).

[5] Տե՛ս People ex rel Scott v. Silverstein, 86 Ill. App. 3d 605, 41 Ill. Dec. 821, 408 N.E.2d 243 (1980).

[6] Տե՛ս Kirtley v. McClelland, 562 N.E.2d 27 (Ind.Ct.App. 1990); Mile-O-Mo Fishing Club, Inc. v. Noble, 62 Ill. App.2d 50, 210 N.E.2d 12 (1965) (կազմակերպության նախկին նախագահը խախտել էր իր ֆիդուցիար պարտականությունը՝ գնելով այն գույքը, որը նախապես ձեռք բերելու ցանկությունը ուներ այդ կազմակերպությունը: Բնականաբար նախկին նախագահը և տնօրենը գիտեին ոչ առևտրային կազմակերպության՝ այդ գույքը գնելու ցանկության մասին):

[7] Տե՛ս Klaus J.Hopt (Editor), Նշված աշխատությունը, էջ 153, 169:

Վերոհիշյալ երկու պահանջների գործնական կիրառումը, ըստ ԱՄՆ հարկային մարմնի դիրքորոշման, պայմանավորված է ոչ առևտրային կազմակերպության կառավարման մարմիններում ընդգրկված պաշտոնատար անձանց կողմից տարեկան հաշվետվություն ներկայացնելու կամ էական նշանակություն ունեցող տեղեկատվություն բացահայտելու պարտականությամբ, որոնց առկայության պայմաններում առավել հնարավոր կլինի վեր հանել կառավարման մարմիններում ընդգրկված պաշտոնատար անձանց և ոչ առևտրային կազմակերպության կոնտրագենտների միջև իրական փոխահարաբերությունների բնույթը և դրանց հիմքում ընկած անձնական շահերի առկայությունը[1]:

Ինչ վերաբերում է շահագրգռվածության առկայությամբ գործարքների նյութահիրավական բնույթին, ապա վերջինիս ներքո պետք է հասկանալ գործարքի պայմանների արդարացիությունը ոչ առևտրային կազմակերպության համար, տնօրենների և կազմակերպության միջև շահագրգռվածության առկայությամբ գործարքների հաճախականությունը, նմանատիպ գործարքի արդյունքում կազմակերպության ֆինանսական դրությունը և այլն[2]: Պետք է շեշտադրել, որ վերոհիշյալ իրավական դիրքորոշումները ԱՄՆ շատ նահանգներ որդեգրել են իրենց նախադեպային որոշումներում կամ կոդիֆիկացված ակտերում: Ավելին, շահագրգռվածության առկայությամբ մի շարք այնպիսի գործարքներ, ինչպիսին են տնօրեններին տրամադրվող վարկերը, փոխառությունները, երաշխավորությունները, ընդհանրապես շատ նահանգների օրենսդրությամբ արգելված են[3]: Ամփոփելով վերոգրյալը՝ կարող ենք նշել, որ ԱՄՆ իրավական համակարգում շահագրգռվածության առկայությամբ գործարքներում հիմնական են համարվում.

- ֆիդուցիար պարտականություն կրող անձանց իրական շահագրգռվածության, ինչպես նաև այդպիսի գործարքի էական նշանակություն ունեցող փաստերի (տեղեկությունների) բացահայտումը,
- շահագրգռվածություն չունեցող խորհրդի կամ կառավարման այլ իրավասու մարմնի կողմից գործարքին հավանություն տալը:

Ընդ որում այստեղ որոշակի հետաքրքրություն է ներկայացնում այն հարցը, թե այս դեպքերում ով է կրում գործարքներում շահագրգռվածության ապացուցման պարտականություն: Ստատուտներով ամրագրված ընդհանուր կանոնը սահմանում է, որ այն անձը, ով վիճարկում է գործարքում շահագրգռվածության առկայության փաստը, նա էլ պետք է կրի դա ապացուցելու պարտականությունը: Եթե անկախ և գործարքում շահագրգռվածություն չունեցող տնօրենները կամ խորհրդի անդամները, գործելով բարեխղճորեն, հավանության են արժանացրել գործարքը, ապա նման դեպքերում շահագրգռվածություն ունեցող անձանց շահերը կպաշտպանվեն գործարար որոշման կանոնի ուժով (business judgement rule): Իսկ այն դեպքում, երբ չեն պահպանվել ստատուտներով նախատեսված ընթացակարգերը, ապա շահագրգռվածություն ունեցող անձինք պետք է կրեն այն հանգամանքը ապացուցելու պարտականությունը, որ տվյալ գործարքը իրականում եղել է արդարացի և ողջամիտ[4]:

---

[1] Conflict-of-interest Policies: Disclosure, Monitoring, and Enforcement, Miller Chevalier Pro Bono center (2015 July), էջ 1:
[2] Տե՛ս նույն տեղում, էջ 153,170:
[3] Rev. Model Nonprofit Corp. Act § 8.32; Ill. Rev. Stat. ch. 805 § 108.80; NY Not-for-Profit Corp. L. § 716.
[4] Տե՛ս **Klaus J.Hopt (Editor)**, Նշված աշխատությունը, էջ 154:

Մի շարք հեղինակներ առաջարկել են ոչ առևտրային կազմակերպություններն ընդհանրապես զրկել շահագրգռվածության առկայությամբ գործարք կնքելու հնարավորությունից, քանի որ նման պայմաններում ավելի կանխատեսելի կլինեն ոչ առևտրային կազմակերպությունների կողմից կնքված գործարքների բնույթը, և ավելի դյուրին կդառնա դրանց արդյունավետ կիրառումը[1]: Հեղինակների մի մասի կարծիքով էլ նմանատիպ գործարքների կնքման արգելքը կնպաստի ֆիդուցիար պարտականությունների ամրապնդմանը, ինչպես նաև կապահովվի ոչ առևտրային կազմակերպությունների կողմից հիմնական խոչընդոտների հաղթահարումը[2]: Իսկ մի շարք այլ հեղինակներ արտահայտում են այն դիրքորոշումը, որ շահագրգռվածության առկայությամբ գործարքների կնքումը միանգամայն իրավաչափ երևույթ է՝ պայմանավորված այն հիմնավորմամբ, որ շատ դեպքերում ոչ առևտրային կազմակերպությունները ստանում են օգուտներ շահագրգռվածություն ունեցող անձանց հետ գործարքներ կնքելուց, քանի որ նման գործարքների կնքման և կատարման ընդհանուր ծախսերը բավական քիչ են, և շահագրգռվածություն ունեցող անձինք ապրանքների մատակարարումը կամ ծառայությունների մատուցումը սովորաբար իրականացնում են իրական շուկայական արժեքից էլ ցածր պայմաններում, քանի որ նրանք ավելի հստակ գիտեն կազմակերպության իրական կարիքների մասին[3], ինչն իր հերթին նպաստում է շահագրգռվածություն ունեցող անձանց կողմից առավել հետևողական և նվիրված գործունեություն ծավալելուն:

Բացի այդ, շատ դեպքերում կազմակերպությունը չի ունենա հնարավորություն համապատասխան ապրանքները կամ ծառայությունները ձեռք բերել շուկայում, ուստի նման իրավիճակում կարող ենք նշել, որ շահագրգռվածության առկայությամբ գործարքի կնքումը կհամարվի իրական և անխուսափելի անհրաժեշտություն: Կարծում ենք, որ նման պայմաններում նպատակահարմար չէր լինի ոչ առևտրային կազմակերպությանը զրկել շահագրգվածության առկայությամբ գործարք կնքելու իրավունքից և միաժամանակ չէր բխի վերջիններիս ազատ տնտեսական գործունեություն իրականացնելու սահմանադրորեն ամրագրված երաշխիքից: Ուստի այս նկատառումից ելնելով՝ համամիտ ենք պրոֆեսոր Հարվի Գոլդշմիդթի արտահայտած այն տեսակետին, որ շահագրգռվածության առկայությամբ գործարքը տվյալ կազմակերպության համար պետք է լինի արդարացի, իսկ դատարանները նմանատիպ գործեր քննելիս պետք է որպես հիմք ընդունեն հավատարմության ստանդարտը և ղեկավարվեն բացառապես գործարար որոշման կանոնով[4]: Այսպիսով՝ ամփոփելով վերոգրյալը՝ նշենք, որ ոչ առևտրային կազմակերպությունների կողմից շահագրգռվածության առկայությամբ գործարքների կնքումը ինքնին իրավաչափ երևույթ է, և այստեղ խնդրի քննարկումը պետք է իրականացնել հետևյալ հարցադրմամբ. թե արդյոք գործող օրենսդրությամբ նախատեսվա՞ծ են նմանատիպ գործարքների կնքման իրավական ընթացակարգերը, ինչպես նաև այդպիսի գործարքների հնարավոր իրավական հետևանքները (ներառյալ այն դեպքում, երբ գործարքի կնքման սահմանված պարտադիր ընթացակարգը պահպանված չէ):

Ուշագրավ է, որ Ներքին եկամուտների մասին օրենսգրքի 4941-րդ հոդվածով փորձ է կատարվել անդրադառնալ ոչ առևտրային կազմակերպությունների կողմից

---

[1] Տե՛ս **Hansmann,** “Reforming Nonprofit Corporation Law,” supra note 11, at 567–572; See also Deborah A. DeMott, “Self-Dealing Transactions in Nonprofit Corporations,” 59 Brook. L. Rev. 131 (1993).

[2] Տե՛ս **Klaus J.Hopt(Editor),** Նշված աշխատությունը, էջ 154:

[3] Տե՛ս նույն տեղում:

[4] Տե՛ս **Harvey J. Goldschmid,** Նշված աշխատությունը, էջ 155:

կնքվող շահագրգռվածության առկայությամբ գործարքների հնարավոր ձևերին, որոնցով չորակավորված անձանց[1] հետ կնքվում և/կամ սահմանվում են.

- գույքի առուվաճառքի, փոխանակության, լիզինգի պայմանագիր,
- փոխառության կամ այլ կրեդիտի տրամադրման պայմանագիր,
- ապրանքների, ծառայությունների մատակարարում, այլ հարմարությունների ապահովում,
- փոխհատուցման կամ վարձատրության վճարում, այդ թվում՝ ծախսերի հատուցում,
- կազմակերպության ակտիվների փոխանցում, օգտագործում կամ ի շահ չորակավորված անձանց տրամադրում[2]:

Միևնույն ժամանակ Ներքին եկամուտների օրենսգիրքը մատնանշում է այն իրավիճակները, երբ որոշակի գործարքների կնքումը չի ներառում շահագրգվածություն: Մասնավորապես՝ դրանց թվին են դասվում ներքոնշյալներ. եթե չորակավորված անձը ոչ առևտրային կազմակերպությանը տրամադրում է վարկ կամ փոխառություն կամ մատակարարում է ապրանքներ, ծառայություններ՝ պայմանով, որ դրանք տրամադրվում են անտոկոս կամ դրանց դիմաց հատուցում չստանալով, և այդ գումարները, ապրանքները կամ ծառայությունները կօգտագործվեն բացառապես օրենսգրքով սահմանված բարեգործական նպատակներով, եթե ոչ առևտրային կազմակերպությունը չորակավորված անձանց մատակարարում է ապրանքներ, ծառայություններ, ապահովում հարմարություններ՝ միևնույն ժամանակ, առանց բացառության, ապահովելով հավասար մատչելիություն հանրության մնացած անդամների համար (ներառյալ՝ չորակավորված անձանց), ողջամիտ վարձատրության կամ ծախսերի փոխհատուցման դեպքերում, եթե դրանց չափերը իրենց բնույթով ողջամիտ են և անհրաժեշտ ոչ առևտրային կազմակերպության նպատակներին հասնելու համար[3], եթե արդեն իսկ կնքված շահագրգռվածության առկայությամբ գործարքը համեմատելի հանգամանքներում նույն պայմաններով և բովանդակությամբ կկնքվեր այլ անձի հետ, ով օրենքի իմաստով չի համարվում չորակավորված

---

[1] Ընդ որում անհրաժեշտ է նկատի ունենալ, որ շահագրգռվածության առկայությամբ գործարքներում չորակավորված անձանց շրջանակը այլ է: Մասնավորապես Ներքին եկամուտների ծառայության մասին օրենքի 4946-րդ հոդվածը սահմանում է, որ այդպիսիք են համարվում՝ ա) կազմակերպությունում հիմնական ներդրում կատարողը (ըստ Օրենսգրքի 507(d)(2)-րդ հոդվածի հիմնական է համարվում 5000 ԱՄՆ դոլար և ավելի ներդրում իրականացնելը, եթե այդպիսի ներդրումի չափը վերջին հաշվետու ժամանակաշրջանում գերազանցում է տվյալ կազմակերպության օգտին կատարված ներդրումների երկու տոկոսը), բ) կազմակերպության կառավարիչը, տնօրենը, անդամները, մասնակիցները, կառավարման մարմիններում ընդգրկված այլ անձինք, ինչպես նաև այլ անձինք, ովքեր ունեն վերոնշված անձանց հավասար իրավասություն, գ)տիրապետում է այնպիսի կազմակերպության (անկախ նրանից, թե առևտրային է կամ ոչ առևտրային) ակտիվների կամ քվեարկող ձայների կամ ներդրված միջոցներից ստացվող օգուտների 20 տոկոսը, որը տվյալ ոչ առևտրային կազմակերպությունում իրականացնում է հիմնական ներդրումներ, դ) ա),բ),գ) կետերում նշված անձանց ընտանիքի անդամները (ծնող, եղբայր, քույր, զավակներ և այլն), ե) ցանկացած կազմակերպություն, ընկերակցություն կամ տրաստ, որտեղ վերոհիշյալ կետերում մատնանշված անձինք տիրապետում են ակտիվների կամ քվեարկող ձայների կամ ներդրված միջոցներից ստացվող օգուտների ավելի քան 35 տոկոսը, զ) կազմակերպության գործունեությունը ուղղակիորեն կամ անուղղակիորեն կառավարող այլ անձինք: https://www.law.cornell.edu/uscode/text/26/4946

[2] **Darren B. Moore,** Recognizing and avoiding self-dealing: Both direct and indirect, Salk institute 40th Annual Tax and Management Seminar for Private Foundations March 14-16, 2012 La Jolla, California, p. 4: https://www.law.cornell.edu/uscode/text/26/4941

[3] I.R.C. § 4941 (d)(2)- րդ հոդված: https://www.law.cornell.edu/uscode/text/26/4941

անձ, եթե այդպիսի գործարքի կնքումը պայմանավորված է ոչ առևտրային կազմակերպության բնականոն գործունեությունը ապահովելու անհրաժեշտությամբ կամ գործարքի առարկա հանդիսացող գույքի կամ այլ ապրանքի միայն որոշակի անձի տնօրինության ներքո գտնվելու հանգամանքով կամ այդպիսի գույքի և ապրանքի եզակիությամբ, կամ եթե չորակավորված անձի հետ պայմանագիր չկնքելու դեպքում ոչ առևտրային կազմակերպությունը կհայտնվեր տնտեսական դժվարությունների առաջ և այլն[1]:

Հավատարիմ լինելու ֆիդուցիար պարտականության հետ ուղղակի կապի մեջ է ոչ առևտրային կազմակերպության կառավարման մարմիններում ընդգրկված անձանց կողմից անհրաժեշտ հոգատարություն դրսևորելու (duty of care) ֆիդուցիար պարտականության պահպանումը: Սա էլ իր հերթին ենթադրում է, որ կառավարման մարմիններում ընդգրկված անձինք պարտավոր են իրենց վրա դրված պարտականությունները իրականացնել՝ դրսևորելով ջանասիրություն, ուշադրություն, հոգածություն և հմտություն: Ընդ որում՝ կառավարման մարմիններում ընդգրկված անձանց կողմից իրենց վրա դրված պարտականությունների խախտումը կարող է դրսևորվել երկու եղանակով. ***առաջին***՝ ոչ առևտրային կազմակերպության գործունեության նկատմամբ անհրաժեշտ վերահսկողություն չիրականացնելով, ***երկրորդ***՝ հիմնավորված (անհրաժեշտ փաստական հանգամանքներով) որոշման կայացում չապահովելով այն հարցի կապակցությամբ, որի լուծումը գտնվում է կազմակերպության խորհրդի իրավասության ներքո: Ընդ որում խորհուրդը հնարավոր պատասխանատվությունից խուսափելու համար իրավասու է որոշում կայացնելիս հիմնվել համապատասխան փորձագետների հատուկ կարծիքի վրա:

Հոգածության պարտականության և նրա բաղկացուցիչ մասը կազմող գործարարական որոշման կանոնի (business judgement rule) կարևորությունը այն է, որ դրանք երկուսն էլ փոխկապված են ոչ առևտրային կազմակերպությունում որոշում կայացնելու հնարավորության հետ: Եթե տնօրենը գործում է բարեխղճորեն, հոգածության անհրաժեշտ մակարդակ դրևորելու միջոցով և իր իրավասության շրջանակներում, ապա դատարանը չի կարող դիմել պատասխանատվության միջոցների կիրառման նույնիսկ այն դեպքում, երբ կազմակերպության համար առաջացել են անբարենպաստ հետևանքներ: Այսինքն՝ հոգատարության պարտականության պատշաճ իրականացումը գնահատելիս պետք է ուշադրություն դարձնել ոչ թե որոշումների կայացման ճշտությանը, այլ առավելապես կառավարման մարմիններում ընդգրկված անձանց կողմից իրենց պարտականությունների կատարման ձևին և կարգին[2]: Ընդ որում հոգատարության ֆիդուցիար պարտականության գործնական իրացման ժամանակ առաջ են գալիս երկու հիմնական հարցեր. ***առաջին,*** որը վերաբերում է ընթացակարգերին և պահանջում է պարզել, թե արդյոք որոշում կայացնելիս ոչ առևտրային կազմակերպության տնօրենները դրսևորել են բավարար հոգածություն, թե ոչ, և ***երկրորդ,*** որը գերազանցապես ունի նյութահիրավական բնույթ, վերաբերում է նրան, թե արդյոք նման որոշման կայացումը այնքան հիրատապ է եղել, որ նախատեսված երաշխիքները պետք է անտեսվեին, կամ արդյոք այդպիսի հիրատապության պայմաններում տնօրենների վրա կարող է դրվել անձնական պատասխանատվություն: Եթե վերոհիշյալ հարցադրումներին տրված պատասխանները դրական են, ապա տնօրենը պաշտպանված է գործարարական որոշման կանոնով (business judgement rule), որը ոչ առևտրային կազմակերպություններում արտահայտվում է լավագույն որոշման կանոնի (best judgement rule) տեսքով: Նմանատիպ պայմաններում գործարարական որոշման կանոնը սահմանում է, որ տնօ-

[1] Տե՛ս **Darren B. Moore,** Նշված աշխատությունը, էջ 6-7:
[2] Տե՛ս **Klaus J.Hopt(Editor)**, Նշված աշխատությունը, էջ 151:

րենը իր որոշման կայացման կամ կատարման պատճառով չպետք է պատասխանատվություն կրի կազմակերպությանը պատճառված ցանկացած վնասի համար, այնքան ժամանակ, քանի դեռ վերջինս դրսևորել է պատշաճ հոգածություն: Ամփոփելով ամերիկյան իրավական դոկտրինի հիմնական մոտեցումները՝ նշենք, որ գործարարական որոշման կանոնը գործում է բացառապես անձանց գործողություններում անբարեխղճության, ապօրինության կամ կեղծիքի բացակայության պայմաններում[1]:

Շահերի բախման վերաբերյալ յուրօրինակ իրավակարգավորումներ են առկա Ռուսաստանի Դաշնության «Ոչ առևտրային կազմակերպությունների մասին» օրենքի 27-րդ հոդվածով[2]: Ոչ առևտրային կազմակերպության գույքային շահերի, ինչպես նաև կանոնադրությամբ նախատեսված նպատակներին հասնելու նպատակից ելնելով՝ վերոգրյալ օրենքի 27-րդ հոդվածի 1-ին մասը տալիս է շահագրգռված անձ հասկացությունը, որի ներքո ներառվում են այն անձինք, ովքեր ունեն ոչ առևտրային կազմակերպության կողմից այլ անձանց կամ կազմակերպությունների հետ իրականացվող այս կամ այն գործողության (ներառյալ՝ գործարքի) մեջ շահագրգռվածություն, և նույն հոդվածն ընդգծում է, որ ոչ առևտրային կազմակերպության կողմից իրականացվող այս կամ այն գործողության (ներառյալ՝ գործարքի) մեջ շահագրգռվածության առկայությունն ինքնին հանգեցնում է շահերի բախման:

Ընդ որում վերոհիշյալ հոդվածով առանձնացվում են երկու խումբ հնարավոր սուբյեկտներ, ովքեր կարող են համարվել շահագրգիռ անձինք. Դրանք են. առաջին՝ ոչ առևտրային կազմակերպության նախագահը (նախագահի տեղակալը), երկրորդ՝ կազմակերպության կառավարման կամ գործունեության նկատմամբ վերահսկողություն իրականացնող մարմիններում ընդգրկված անձինք: Պետք է նկատի ունենալ, որ երկրորդ խմբում ընգրկված անձանց դեպքում (բացի այն հանգամանքից, որ նրանք կառավարման կամ գործունեության նկատմամբ վերահսկողություն իրականացնող մարմիններում ընդգրկված անձինք են) շահագրգռվածության առկայության համար անհրաժեշտ են նաև այլ պայմանների, օրինակ՝ աշխատանքային հարաբերությունների առկայություն[3]:

«Ոչ առևտրային կազմակերպությունների մասին» ՌԴ օրենքը անգլոամերիկյան իրավական համակարգում հավատարիմ լինելու ֆիդուցիար պարտականության նման ևս պահանջում է, որ շահագրգռվածություն ունեցող անձինք առաջին հերթին պետք է հաշվի առնեն ոչ առևտրային կազմակերպության շահերը և չպետք է օգտագործեն (յուրացնեն) կազմակերպության հնարավորությունները[4]:

---

[1] Տե՛ս նույն տեղում:

[2] Федеральный закон РФ "О некоммерческих организациях" от 12.01.1996 N 7-ФЗ (действующая редакция, от 31.12.17) հոդված 27, էլեկտրոնային ռեսուրս http://www.consultant.ru/document/cons_doc_LAW_8824/1b0c2d3c7cca721994c4211fe5940aea1e16fd6d/ (վերջին մուտք՝ 17.02.18):

[3] Комментарий к Федеральному закону от 12 января 1996 г. N 7-ФЗ "О некоммерческих организациях", 14 Октября 2014, էլէկտրոնային ռեսուրս՝ https://medaboutme.ru/zdorove/spravochnik/pravovye-voprosy/dlya-medrabotnika/dokument/kommentariy-k-federalnomu-zakonu-ot-12-yanvarya-1996-g-n-7-fz-o-nekommercheskikh-organizatsiyakh-/ (վերջին մուտք՝ 17.02.18):

[4] Ըստ ՌԴ Ոչ առևտրային կազմակերպությունների մասին օրենքի 27-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ պարբերության՝ սույն հոդվածի իմաստով ոչ առևտրային կազմակերպության հնարավորություններ են համարվում ոչ առևտրային կազմակերպությանը պատկանող գույքը, գույքային և ոչ գույքային իրավունքները, գործարարական գործունեություն իրականացնելու դեպքում վերջինիս հնարավորությունները, ոչ առևտրային կազմակերպության գործունեության և ապագա նախագծերի վերաբերյալ տեղեկությունները, որոնք վերջինիս համար ունեն արժեք:

ՌԴ օրենքը կարգավորում է այն դեպքերը, թե ինչ պետք է կատարի շահագրգռվածություն ունեցող անձը: Մասնավորապես՝ շահագրգռվածություն ունեցող անձը պարտավոր է կազմակերպության կառավարման կամ նրա գործունեության նկատմամբ վերահսկողություն իրականացնող մարմնին մինչ գործարքի կնքումը հայտնել շահագրգռվածության առկայության մասին: Ավելին, այդ մասին հայտնելուց հետո շահագրգռվածության առկայությամբ գործարքը պետք է հավանության արժանանա կազմակերպության կառավարման կամ նրա գործունեության նկատմամբ վերահսկողություն իրականացնող մարմնի կողմից: ՌԴ գործող օրենքը նախատեսում է նաև, որ այն դեպքում, երբ շահագրգռվածության առկայությամբ գործարքը կնքվել է օրենքի 27-րդ հոդվածով նախատեսված կարգի խախտմամբ, ապա այն կարող է անվավեր ճանաչվել դատարանի կողմից, իսկ այն շահագրգիռ անձը, ում գործողությունների հետևանքով պատճառվել է վնաս, կկրի օրենքով նախատեսված պատասխանատվություն ոչ առևտրային կազմակերպությանը պատճառված վնասների համար: Սակայն պետք է նշենք, որ ՌԴ օրենսդրական կարգավորման հիմնական թերությունը այն է, որ այստեղ կարգավորված չէ այն հարցը, թե ով կարող է ներկայացնել գործարքը անվավեր ճանաչելու պահանջ, ինչպես նաև՝ թե որ պահից և ինչպիսի ժամկետներում անձը կարող է դիմել շահագրգռվածության առկայությամբ գործարքը անվավեր ճանաչելու պահանջով:

Շահերի բախման վերաբերյալ յուրահատուկ իրավակարգավորումներ առկա են նաև Հոլանդիայի Թագավորությունում: Մասնավորապես՝ հոլանդական օրենսդրությունը նախատեսում է, որ ասոցիացիաներում շահերի բախման առկայության դեպքում վերջինիս մասնակիցների ընդհանուր ժողովն իրավասու է նշանակելու կամ ընտրելու այլ անձի, որը տվյալ կազմակերպության կառավարման խորհրդի փոխարեն կներկայացնի տվյալ ասոցիացիան երրորդ անձանց հետ հարաբերություններում[1]: Պետք է արձանագրենք, որ հոլանդական իրավակարգավորումները բավական թերի են և չեն տալիս հարցի վերջանական ու համապարփակ լուծում, քանի որ կառավարման խորհրդի փոխարեն այլ անձ ընտրելը և նշանակելը կարող է էական բացասական ազդեցություն ունենալ կազմակերպության կորպորատիվ կառուցվածքի և գործունեության արդյունավետության վրա, և բացի այդ՝ նման անձին կազմակերպության գործերի կառավարման իրավասություն վերապահելով՝ վերջիններս կարող են թերանալ իրենց պարտականությունների կատարման ժամանակ (որը կարող է դրսևորվել կազմակերպության կառավարման հարցերի

[1] Միանգամայն անհասկանալի է այն հանգամանքը, թե ինչու Հոլանդիայում գործող հիմնադրամների համար նման իրավակարգավորումներ նախատեսված չեն, քանի որ ընգծվում է, որ հիմնադրամներում շահերի բախման հնարավորությունը առավել քան մեծ է: Այս հարց կապակցությամբ հոլանդական իրավագետների տեսակետները բաժանվում են երկու խմբի: Շատերը համարում են, որ առկա չեն հիմնադրամի կառավարման խորհուրդի անհրաժեշտ սահմանափակումներ ներկայացուցչական լիազորությունների իրականացման ընթացքում այն դեպքում, երբ առկա է շահերի բախում: Իսկ հեղինակների մեկ այլ խումբ դրսևորում է ավելի խիստ մոտեցում՝ գտնելով, որ կառավարման խորհուրդը փաստացի չունի անհրաժեշտ լծակներ և իրավասություն, երբ իր և տվյալ հիմնադրամի միջև ծագել է շահերի բախում: Ընդ որում հոլանդական օրենսդիրը նշված հարցի լուծումը թողել է կազմակերպությունների հայեցողությանը՝ նախանշելով, որ թե՛ հիմնադրամների և թե՛ ասոցիացիաների կանոնադրությունները պետք է հստակ դրույթներ պարունակեն շահերի բախումից խուսափելու և դրանց առկայության դեպքում անհրաժեշտ ընթացակարգեր պահպանելու մասին: Տե՛ս Klaus J.Hopt (Editor), Նշված աշխատությունը, էջ 237, **Y. L. L. A. M. Delfos-Roy,** “Stichtingsbestuurders en tegenstrijdig belang” (“Members of the management board of foundations and conflicting interest”), *Tijdschrift voor Ondernemingsbestuur* (TOB) 2005, pp. 129 et seq., **Dijk-Van der Ploeg**, *Van Vereniging en Stichting, Coöperatie en Onderlinge Waarborgmaatschappij*, 5th edn., 2007, p. 236 and W. J. M. van Veen, TOB 2005, pp. 175 et seq.

նկատմամաբ անհրաժեշտ շրջահայացություն և հոգածություն չդրսևորելով) կամ չարաշահելով իրենց պաշտոնեական դիրքը՝ կազմակերպության համար ընդունեն ոչ բարենպաստ որոշումներ:

Ֆրանսիայի Հանրապետությունում վերոհիշյալ հարցի լուծման կապակցությամբ գոյություն ունեն որոշակի դրույթներ, որոնք կոչված են կարգավորելու անմիջականորեն կամ միջնորդի կարգավիճակով հանդես եկող շահագրգիռ անձանց մասնակցությամբ գործարքների կնքման հիմնահարցին: Մասնավորապես՝ Ֆրանսիայի Առևտրային օրենսգրքի 612-րդ հոդվածի 5-րդ մասով[1] նախատեսվում է, որ հատուկ ընթացակարգով պետք է կնքվեն այնպիսի գործարքները, որոնց մի կողմում հանդես են գալիս ոչ առևտրային կազմակերպությունը ֆինանսավորող հանրային իշխանության պետական կառավարման մարմինները կամ դրանց պաշտոնատար անձինք (եթե նրանց կողմից տրվող գումարները գերազանցում են 153.000 եվրոն) կամ այլ ասոցիացիաներ և հիմնադրամներ՝ որպես կոնտրագենտ (որոնք իրականացնում են տնտեսական-առևտրային գործունեություն՝ չունենալով առևտրային *(commerçant)* գործունեություն իրականացնելու իրավունք), և մյուս կողմից ոչ առևտրային կազմակերպության կառավարիչները և մասնակիցները, որոնք միևնույն ժամանակ համարվում են վերը թվարկված սուբյեկտների (հիմնադրամների, պետական կառավարման մարմինների) ներկայացուցիչներ: Նույն օրենսգրքով նախատեսվում են նաև այն իրավական հետևանքները, որոնք առաջանում են այդպիսի գործարքների կնքման համապատասխան ընթացակարգը չպահպանելու դեպքում: Ավելին՝ նշվում է, որ այն գործարքները, որոնք հավանության չեն արժանացել, չեն կարող իրավական ուժ ունենալ և չեն կարող կատարվել, իսկ նման գործարքի արդյունքում կազմակերպության համար առաջացած վնասները հատուցելու պարտականությունը անհատապես և/կամ համապարտության կարգով (կախված գործի փաստական հանգամանքներից) պետք է դրվի կազմակերպության կառավարիչների և/կամ մասնակիցների վրա[2]: Թերևս միակ բացառությունը, որի դեպքում չի առաջանա կառավարման մարմիններում ընդգրկված անձանց պատասխանատվություն ենթարկելու անհրաժեշտություն, սովորական, բնականոն գործարքների կնքումն է՝ պայմանով, եթե վերջիններս իրենց բնույթով և ֆինանսական առանձնահատկություններով գործարքի կողմերի համար չեն ունենա մեծ և էական նշանակություն, կամ եթե նմանատիպ գործարքները կկնքվեն անհատույց հիմունքներով[3]: Ուշագրավ է, որ Ֆրանսիայի օրենսդրության համաձայն՝ ոչ առևտրային կազմակերպությունը կհամարվի շահույթ հետապնդող իրավաբանական անձ, այսինքն՝ կկորցնի ոչ առևտրային կազմակերպության կարգավիճակը, եթե կպարզվի, որ վերջինիս գործունեության նպատակը իրեն անդամակցող կազմակերպությունների օգտին և ի շահ նրանց ծառայությունների մատուցումն է, որը հանգեցրել է շահերի բախման[4]:

Ընդհանրացնելով ողջ վերոգրյալը՝ գտնում ենք, որ հասարակական կազմակերպության համար օրենսդրական մակարդակում անհրաժեշտ է նախատեսել շահերի բախման (շահագրգռվածության առկայության) վերաբերյալ իրավակարգավո-

---

[1]France Code de commerce, Chapitre II: Des dispositions applicables aux personnes morales de droit privé non commerçantes ayant une activité économique Art. R. 612–5), էլեկտրոնային ռեսուրս՝
https://www.legifrance.gouv.fr/affichCode.do;jsessionid=B81B136C2B8841C5FDE7B262AD30DBAD.tplgfr21s_1?idSectionTA=LEGISCTA000006146267&cidTexte=LEGITEXT000005634379&dateTexte=20130701 (վերջին մուտք՝ 17.02.18):

[2] Տե՛ս նույն տեղում:

[3] Տե՛ս նույն տեղում:

[4] Տե՛ս Klaus J.Hopt (Editor), Նշված աշխատությունը, էջ 288:

րումներ, որոնք կբխեն արտասահմանյան պետությունների փորձից և առնվազն կներառեն հետևյալ պահանջները՝

անձանց շրջանակը, որոնց նկատմամբ կիրառելի են շահերի բախման իրավակարգավորումները,

այդ անձանց կողմից անհրաժեշտ տեղեկատվության բացահայտումը, հավաքումն ու ուսումնասիրությունը,

շահերի բախման առկայությամբ գործարքների կնքման կարգը՝ դրանց հաստատումը խորհրդի անկախ անդամների կողմից, որոնք այդ ընթացքում կուսումնասիրեն նաև հնարավոր այլ տարբերակների առկայությունը և կդրսևորեն բարեխղճություն (պատշաճ ջանասիրություն) գործարքի արդարացիությունը գնահատելու հարցում,

ապացուցման բեռի բաշխում հետևյալ կերպ. համապատասխան ընթացակարգի պահպանման դեպքում՝ այն անձի կողմից, ով վիճարկում է գործարքի արդարացիությունը և կազմակերպության շահերից չբխելը, իսկ ընթացակարգը չպահպանելու դեպքում՝ շահագրգռվածություն ունեցող անձի կողմից,

շահագրգռվածության առկայությամբ կնքված գործարքների իրավական հետևանքները՝ գործարքի անվավերություն, վնասների հատուցում, ստացված եկամտի վերադարձ և այլն,

վաղեմության հատուկ ժամկետների նախատեսում:

НЕОБХОДИМОСТЬ ПРАВОВОГО РЕГУЛИРОВАНИЯ СДЕЛОК С ЗАИНТЕРЕСОВАННОСТЬЮ В НЕКОММЕРЧЕСКИХ ОРГАНИЗАЦИЯХ

Геворк Погосян
Аспирант кафедры гражданского права ЕГУ

К вопросу ответственности органов управления юридического лица относится часть 3-ая статьи 57-ой Гражданского кодекса Республики Армения, согласно которой, лицо, действующее или устава юридического лица, должен действовать добросовестно и разумно в интересах представляемого лица. Аналогичное положение также предусмотрено частью 2-ой статьи 18-ой Закона РА «О неправительственных организациях», а в соответствии с частью 5-ой статьи 23-ей того же закона, исполнительный орган, а в случаях, предусмотренных законом, руководитель данного органа несет ответственность за невыполнение, либо ненадлежащее выполнение требований, предусмотренных законом, другими правовыми актами, уставом организации, решениями собрания или заключенными договорами.

Законодательство Республики Армения регулирует ответственность органов управления некоммерческого юридического лица, ограничеваясь только исполнительным органом (органом, уполномоченным действовать от имени организации) и не регулирует прововые отношения в сфере действия других лиц, которые могут быть заинтересованы в той или иной сделке с участием некоммерческой организации, что влечет за собой дастаточное количество негативных последствий.

Между тем, немало примеров, когда организация терпит убытки из-за злоупотребления властью со стороны члена(-ов) руководящего органа в сфере заключения сделок, по которым подлежат выплате высокие проценты, либо предусматриваются чрезвычайно высокие и несоразмерные с предоставляемыми услугами вознаграждения руководящим органам и другим средствам.

К необходимости законодательного регулирования данного вида правоотношений относится настоящая статья.

NECESSITY OF LEGAL REGULATION OF TRANSACTIONS WITH INTEREST IN NON-PROFIT ORGANIZATIONS

Gevorg Poghosyan
Ph.D. at the YSU Chair of Civil Law

The third part of the 57th article of the Civil Code of the Republic of Armenia refers to the issue of responsibility of the management bodies of a legal entity, according to which the person acting based on law or the charter of a legal entity must act in good faith and reasonably in the interests of the person being represented. A similar provision is also provided for in Part 2, Article 18 of the RA Law "On Non-Governmental Organizations", and in accordance with Part 5, Article 23 of the same law, the executive body, and in cases provided by law, the head of this body is responsible for not fulfilling or not properly fulfilling the requirements provided for by law, other legal acts, the organization's charter, decisions of the meeting or agreements.

As one can notice, the legislation of the Republic of Armenia regulates the responsibility of the management bodies of a non-profit legal entity, limited only by the executive body (the body authorized to act on behalf of the organization) and does not regulate provisional relations in the sphere of action of other persons who may be interested in a transaction in which non-profit organizations take part, which entails a sufficient number of negative consequences.

Meanwhile, there are not a few examples when an organization is suffering losses due to abuse of power by a member (s) of the governing body, in the field of concluding deals high interest rates, or extremely high remunerations for the services provided by the employees of such organizations.

This article is to provide reasons and basements for the need for legislative regulation of the transactions with interest by all means.

Բանալի բառեր – *ոչ առևտրային կազմակերպություններ, իրավաբանական անձ, շահերի բախում, ձեռնարկատիրական գործունեություն, կանոնադրություն, կառավարման մարմիններ, շահագրգռվածություն*
Ключевые слова: *Некоммерческие организации, юридические лица, конфликт интересов, предпринимательская деятельность, устав, органы управления, заинтересованность*
Key words: *Non-profit organizations, legal entities, conflict of interests, entrepreneurial activity, charter, management bodies, interest*